

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ

VIII

ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

**ՍՈՑԻԱԼԻԶՄԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ



ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՃԱՌ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VIII ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ
1936 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ

ԸՆԿ. Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎԻ ԶԱՌԸ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VІІІ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1936 թ. նոյեմբերի 29-ին

(Ընկեր Մոլոտովի յերեկայն ամբիոնի վրա ամբողջ դահլիճը դիմավորում է բուռն ովացիայով: Բոլորը վոսփի յեն կանգնում: Բացակացուրյուններ—«Ընկեր Մոլոտովին ուռա՞», «Կեցցե՛ր ընկեր Մոլոտովը, ընկեր Սալիհի ամենամերձավոր զինակիցը»: Հուժկու «ուռան» յեվ յերկար ժամանակ չուող ծափահարուրյունները Եարունակվում են մի քանի րոպե):

I. ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Ե

Նոր Սահմանադրության՝ իր թափով չտեսնված համաժողովրդական քննարկումը անցնելուց և ընկեր Ստալինի պատմական ղեկուցումն այս համագումարում լսելուց հետո, մեր յերկրի աշխատավորները լիակատար հիմք ունենալով կարող են ասել. «Մենք



1-334399

В. М. МОЛОТОВ

КОНСТИТУЦИЯ СОЦИАЛИЗМА

Речь на чрезвычайном
VІІІ Всесоюзном съезде советов
29 ноября 1936 г.

Армпартиздат, Ереван

լավ գիտենք, թե ինչ է նշանակում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության նոր Սահմանադրությունը, ինչ է նշանակում մեր ստալինյան Սահմանադրությունը» (ծափահարություններ) :

Այդ՝ հաղթանակած սոցիալիզմի Սահմանադրությունն է : Դրանով է վորոշվում նրա բովանդակությունը :

ԽՍՀՄ-ի մինչև այժմ գործող Սահմանադրությունը վերաբերում է 1924 թվականին :

Այն ժամանակ մենք դեռ չէինք կարող խոսել սոցիալիզմի հաղթանակի մասին՝ մեր յերկրում : «Ո՞վ ո՞ւմ» հարցը դեռ լուծված չէր : Սոցիալիստական տնտեսությունը վերելքի շրջանում էր գտնվում, և նրա գերակշռությունն արդեն նշմարվել էր, բայց դեռ աճում էին նաև կապիտալիստական տարրերը, իսկ դյուզում տիրապետում էր մանր սեփականատիրական տնտեսությունը՝ ջախջախված կապիտալիզմի առսվել խոշոր մնացորդը : Ուստի և մինչև այս համադրմարը գործող Սահմանադրությունն արտացոլում էր այնպեսի դրություն, վորը շատ բանով տարբերվում էր ներկայիս դրությունից :

Խորհրդային Միության նոր Սահմանադրությունն ստեղծվում է այլ սլայամաններում :

Մեր յերկրում արդեն լիովին տիրապետում է տնտեսությունի սոցիալիստական սխտեմը և արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը, լիկվիդացիայի յեն յենթարկվել շահադործող դասակարգերը, վոչնչացվել է մարդու շահադործումը մարդու կողմից, սեղի յե ունենում մասսաների բարեկեցությունի, կուլտուրականությունի ու սոցիալիստական

գիտակցության բուռն վերելք : Հենց այդ բանն էր արտացոլումը գտավ նոր Սահմանադրության մեջ :

Սոսաջին անդամն է, վոր յերկրի Սահմանադրությունը վորոշում է աշխատավորների ստեղծած սոցիալիստական հասարակության հիմքերը և նրա պետական կառուցվածքը : Այսպես է «ստալինյան Սահմանադրությունը» :

Մեր յերկրում նոր հասարակություն կառուցելու հնարավորություն ստանալու համար—մի հասարակություն՝ առանց մարդու կողմից մարդու շահադործման—բանվորները, գյուղացիությունի հետ դաշն կընքած, պետք է հեղափոխական ճանապարհով տապալյին կապիտալիստներին ու կալվածատերերին և հաստատելին իրենց իշխանությունը—խորհուրդների իշխանությունը, պրոլետարական դեկտատուրան : Կապիտալիզմից ազատադրվելու այլ ուղիներ պատմությունը չի տվել և, ինչպես հայտնի յե, այժմ էլ չի տալիս : Բայց, տապալելով կեղեքիչներին և հետ մղելով դեպի իշխանություն վերադառնալու նրանց բաղմաթիվ վործերը, աշխատավորները, ինչպես յուրաքանչյուրն էլ այժմ կարող է տեսնել, վատ չողտադործեցին իրենց համար նոր, իսկապես յերջանիկ կյանք ստեղծելու հնարավորությունը :

Սահմանադրությունը ծրագիր չէ, չի կարելի Սահմանադրությունը չիթել ծրագրի հետ,—ասում էր այստեղ ընկեր Ստալինը : Յեվ իսկապես, նոր Սահմանադրությունը խոսում է այն մասին, ինչ արդեն նրվածված և իրականացված է մեր յերկրում :

Նոր Սահմանադրությունը ծրագրային հարցեր չի դնում : Նա ձևակերպում է արենսդրական կարգով

հաստատում է բանկորդները ու դյուղացիները սոցիալ-
լիստական պետութեան մեծ նվաճումները :

Սահմանադրութունը սոցիալիզմը հայտարարում է
մեր պետութեան հիմք : Դրա հետ մեկտեղ նա ամրաց-
նում է այն, ինչ առաջ է յեկել մեր պետութեան մեջ
սոցիալիզմի հաղթանակի հիման վրա, և կատարելա-
գործում է պետական կարգերի վորոշ ձևերը :

Բայց մի՞թե փաստ չէ, վոր նոր Սահմանադրու-
թեան, սոցիալիզմի Սահմանադրութեան հրապարակու-
մը լայն մասսաների և մեր բոլորիս վրդմից ընդունվեց
վորպես ինչ-վոր նոր բան տվող, վորպես ԽՍՀՄ-ի ժո-
ղովուրդները կյանքում նոր հեռանկարներ քաց անող :
Սահմանադրութունը միայն հանրազումարի բերեց
սոցիալիստական հեղափոխութեան նվաճումները, մի-
այն դրի առավ այն, ինչ մենք գործնականում ունենք,
ինչ արդեն մեր ձեռքումն է : Նա պարզ ու ճշգրիտ
բառերով միայն է միամիտփեց այն, ինչ ունեն ԽՍՀՄ-
ում սոցիալիզմ կառուցած ժողովուրդները, առանց
վորեն դեկլարացիա անելու ապագայի մասին, ԽՍՀՄ-ի
հետագա նպատակների մասին : Բայց մի՞թե փաստ չէ,
վոր նույնիսկ այդ բավական յեղավ մեր սոցիալիստա-
կան հորիզոնն զգալիորեն լայնացնելու և միլիոնավոր
ու միլիոնավոր հասարակ մարդկանց կարծեք թե
թեկավորելու համար, մարդկանց, վորոնք նոր Սահ-
մանադրութունը դարձրել են կոմունիզմի գործի համար
մղվող հետագա պայքարի մարտական դրոշ (ծափախա-
րութուններ) :

Սահմանադրութունն ամփոփեց յերկրի եկոնոմի-
կայի մեջ կատարված վերականուցման արդյունքները,
ասելով, վոր Խորհրդային Միութեան տնտեսական հիմքն

են հանդիսանում տնտեսութեան սոցիալիստական սիս-
տեմը և արտադրութեան միջոցների սոցիալիստական
սեփականութունը, վորն իր հերթին ապահովում է
մեր յերկրի արտադրողական ուժերի ախալիսի դարգա-
ցում, վորն իսկապես յերջանիկ կարծնի ԽՍՀՄ-ի ժո-
ղովուրդների կյանքը : Սահմանադրութեան մատնա-
նշումը մենատնտես դյուղացիները ու մանր տնայնա-
գործների մասնավոր մանր տնտեսութուն թույլ տա-
լու մասին, առանց ուրիշի ախատանքը չահագործելու
իրավունքի, ինչպես նաև քաղաքացիների անձնական
սեփականութեան ճանաչումը նրանց ախատանքային
յեկամուտների ու ունեցվածքի նկատմամբ, վորչ միայն
չի հակասում մեր յերկրում տնտեսութեան սոցիալիս-
տական ձևերի ու սոցիալիստական սեփականութեան
իշխող դրութեանը, այլ և միանգամայն պարտադիր
լրացում է հանդիսանում տվյալ պայմաններում :

Մյուս կողմից, սոցիալիստական եկոնոմիկայի և
սեփականութեան սոցիալիստական ձևերի հաղթանակը
միայն ընդգծվում է այն փաստով, վոր նույնիսկ
Միութեան այն շրջաններում, վորոնք դեռ վերջերս
տնտեսապես ու կուլտուրապես ամենահետամնացն է-
ին, սոցիալիզմը հաղթանակ է տարել : Բավական է
ասել, վոր մեր եկոնոմիկայում վորչ փոքր կարեորու-
թուն ունեցող ԽՍՀՄ-ի մինչև անդամ այն շրջան-
ները, վորտեղ դեռ յերկու տասնյակ տարի սրանից
առաջ տիրապետում էին մինչևկապիտալիստական հա-
րաբերութունները, վորտեղ նույնիսկ կապիտալիզմը
թույլ եր դարգացած, մինչև անդամ այդ շրջանները
հիմնականում արդեն բռնել են սոցիալիստական զար-

դաջման ուղին: Մի՞թե սա չի վկայում սոցիալիզմի ամենահաղթ ուժի մասին:

Ամրապնդելով մեր եկոնոմիկայի սոցիալիստական հիմքը, Մահմանադրութիւնը հեշտացնում է մեր հետադա շարժումը դեպի կոմունիզմ:

Մահմանադրութեան սոցիալիստական հիմքն իր արտահայտութիւնը դտաւ նաև նրանում, վոր Մահմանադրութիւնը յերնում է այնպիսի նվաճումներից, ինչպես են բոլոր մակարոնյծ դասակարգերի և մարդու կողմից մարդու շահագործման վերացումը, առանց վորի անհնարին կլինեն ապահովել մեր յերկրում աշխատաւորների կրանքի արմատական բարելաւումը, վոր Մահմանադրութիւնը հենւում է նախկին հարուստների ու արտոնյալ խմբերի նյութակարն հարստութիւններն ու կուտակումները համաժողովրդական ունեցւածք դարձնելու վրա, վոր նա հենւում է նաև մասսաների ազբատութիւնը վոչնչացնելու և դործադրկութիւնը վիակատար կերպով վերացնելու վրա, վոր նա բոլոր քաղաքացիների համար հաստատում է ինչպես աշխատանքի իրաւունքը և, հետևապես, յերաշխաւորւած աշխատանք ստանալու իրաւունքը, այնպես եւ աշխատելու սրարտականութիւնը՝ յուրաքանչյուր աշխատանքի ընդունակ մարդու համար, սոցիալիստական այն սկզբունքին համապատասխան, ըստ վորի՝ «Ով չի աշխատում, նա չի ուտում»:

Դրան համապատասխան հաստատւում է սոցիալիստական պետութեան՝ վորպես բանւորների ու դյուղացիների պետութեան հասարակական-դասակարգային հիմքը և բանւոր դասակարգի ղեկավար դերը պետութեան մեջ, վորի առջև դեռ հսկայական խնդիրներ են

կանգնած հասարակութեան վերահառուցումն ավարտելու և դասակարգերը վերջնականապես լիկվիդացիայի յենթարկելու ուղղութեամբ, չխոսելով արդեն արտաքին թշնամուց յերկիրը պաշտպանելու պարտականութիւնների մասին:

Այսպես ուրեմն, Մահմանադրութիւնը ամրացնում է սոցիալիստական հիմքը մեր պետութեան եկոնոմիկայի և հասարակական կառուցւածքի մեջ: Այս տեսակետից նա դրի յե սունում միայն այն, ինչ արդեն դոյութիւնն ունի մեր յերկրում:

Իսկ ինչ վերաբերում է պետական կառուցւածքին, ապա նոր Մահմանադրութիւնն այստեղ խոչորագոյն կատարելագործումներ է մտցնում: Պետական կառուցւածքի մեջ այդ նոր տարրերն ընթանում են սոցիալիստական դեմոկրատիզմի և Սորհրդային Միութեան ժողովուրդների հարաբերութիւններում իսկական ինտերնացիոնալիզմը բաղմտկողմանիւրեն դարգացնելու ուղիով: Լիովին հենւելով սոցիալիզմի, վորպես ՍՍՀՄ-ի հիմքի, հաղթանակի վրա, դեմոկրատիզմի ու ինտերնացիոնալիզմի այդ նոր ձևերը նոր ատիճան են նշանակում թե մեկի և թե մյուսի դարգացման մեջ:

II. ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ԴԵՍՈԿՐԱՏԻԶՄԸ

Խորհրդային կարգերը ներծծված են դեմոկրատիզմով ավելի, քան վրեժե այլ կարգեր: Խորհուրդների միջոցով բանվորներն ու գյուղացիները, այլ կերպ առած՝ ժողովրդական մասսաները կառավարում են պետությունը: Խորհուրդները մարմնավորում են աշխատավորների իշխանությունը, ժողովրդի իշխանությունը, մինչդեռ ամեն մի բուրժուական պետության մեջ իշխանություն գլուխ կանգնած է տիրապետող դասակարգերի միայն արտոնյալ փոքրամասնությունը:

Յեվ այնուամենայնիվ նոր Սահմանադրությունն ընթանում է խորհրդային կարգերի հետագա դեմոկրատացման ուղիով: Կարելի չե ասել, վոր նա ավարտում է ԽՍՀՄ-ի դեմոկրատացումը և ընդարձակելով բազան, ինչպես նաև կատարելագործելով պետական ձևերը, ամրապնդում է մեր յերկրում բանվոր դասակարգի զիկատություն, վորն ընկեր Ստալինի հայտնի արտահայտությունը՝ «լենինիզմի հիմնական հարցն է»:

Խորհրդային նոր Սահմանադրությունը ղեն է չարտում այն սահմանափակումների մնացորդները, վորոնք պահպանվել էին Խորհրդային Սահմանադրության մեջ առաջին շրջանից, յերբ շահագործող դասակարգերի ազդեցությունն աշխատավորների վրա, առանձնապես գյուղում, արտահայտվում էր դեռ բավական լայն կերպով, իսկ խորհուրդները դեռ չէին ամրապնդվել: Սահմանադրությունն ընդհանուր, ուղ-

ղակի, հավասար և զաղանի ընտրություններ և սահմանում աշխատավորների բոլոր խորհուրդներում, ընդհուպ մինչև խորհրդային իշխանության բարձրագույն մարմինները: Նա հանում է ձայնագուրկների հարցը, քանի վոր բոլոր քաղաքացիները, առանց բացառություն, խորհուրդների մեջ ընտրելու և ընտրվելու իրավունք են ստանում: Նա վերացնում է խորհուրդների ընտրության ժամանակ գյուղացիների հանդեպ բանվորների՝ մեղ մոտ ունեցած առավելությունները, ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքացիների համար մտցնելով հավասար ընտրական իրավունք: Խորհրդային իշխանության միջին ու բարձրագույն մարմիններին՝ մինչև այժմ գոյություն ունեցած բազմաստիճան ընտրությունները նա փոխարինում է անմիջականորեն իրենց՝ քաղաքացիների կողմից կատարվող ուղղակի ընտրություններով: Բաց ընտրությունների փոխարեն, քվեարկության արվելի մեծ ազատություն ապահովելու համար, մտցվում են խորհուրդների զաղանի ընտրություններ: Բոլշևիկյան կուսակցության կազմակերպությունների կողքին խորհուրդների համար թեկնածուներ կառավարեն նաև մեղ մոտ գոյություն ունեցող բազմաթիվ անկուսակցական կազմակերպությունները: Սահմանադրությունը համաժողովրդական հարցում (ոեֆերենդում) և սահմանում այն ղեպերի համար, յերբ այդ անհրաժեշտ կգտնի ԽՍՀ Միության Գերագույն Խորհուրդը կամ միութենական հանրապետություններից մեկը:

Ընտրական սխառմի այս փոփոխությունները ցույց են տալիս, վոր մենք վերցնում ենք մյուս պետությունների դեմոկրատիկ կառուցվածքում գոյություն

ունեցող լավագույնը, փոխադրում ենք մեր յերկիրը և հարմարեցնում ենք խորհրդային պետութայն պայ- մաններին: Դուրս ե մնում միմիայն քաղաքական կու- սակցությունների լեզալութայն իրավունքը, բացի կո- մունիզմի կուսակցությունից: Մեր յերկրում, վորտեղ բացակայում են իրար հետ թչնամի դասակարգեր, վորտեղ բանվորներն ու գյուղացիները համախմբվել են կոմունիստական կուսակցութայն շուրջը և վորտեղ մյուս քաղաքական կուսակցութայնները, ինչպես ցույց տվեց մեր ամբողջ փորձը, հանդիսանում են միայն կապիտալիզմի ռեստավրատորների գործակալու- թյունը, տեղ չի կարող լինել նրանց լեզալացման հա- մար (աղմկալի ծախահարուքյուններ):

Մեր ընտրական սիստեմի մատնանչված փոփոխու- թյունները պետք ե ել ավելի բարձրացնեն մասսաների ակտիվությունն աշխատավորների խորհուրդների ընտ- րութայն ժամանակ: Հետաքրքրությունն ընտրություն- ների նկատմամբ անտարակույս կբարձրանա: Նոր սիս- տեմը կծառայի ինչպես խորհուրդների ընտրություն- ների, այնպես ել խորհուրդների ամբողջ աշխատանքի հետագա աշխուժացմանը:

Այս սիստեմը չի կարող չթափահարել դեպքերի պոչից ընթացող թույլ կազմակերպություններին և չի կարող չհարվածել բյուրոկրատացածներին, մասսանե- րից կտրվածներին: Մյուս կողմից, այս սիստեմը հեշ- տացնում ե նոր ուժերի առաջըաշումը՝ առաջավոր բանվորներից, գյուղացիներից ու ինտելիգենաներից, վորոնք պետք ե փոխարինեն հետ մնացած կամ չինով- նիկացած տարրերին:

Ընտրությունների նոր կարգի ժամանակ չի բացառ-

վում այն հնարավորությունը, վոր ընտրվել վորեւե մե- կը նաև թչնամի տարրերից, յեթե այստեղ կամ այն- տեղ վատ լինի մեր աղիտացիան և պրոպագանդը: Մակայն այդ վտանգը վերջի վերջո պետք ե ծառայի գործի ուղտին, քանի վոր դա մարտկելու յե դրա կա- րիքն ունեցող կազմակերպություններին և քնած աշ- խատուչներին:

Այսպիսով, դեմոկրատիզմի լիակատար վարդացումն ապահովող ընտրական նոր սիստեմը պետք ե ուղնի մեզ բարեխմբելու պետական ապարատը, ընդարձակե- լու և նորացնելու ղեկավար խորհրդային կազմերը, բարձրացնելու հենց իրենց՝ կուսակցական կազմակեր- պությունների աշխատանքը մասսաների մեջ: Նշանա- կում ե, խորհուրդների ընտրութայն նոր կարգի իրա- կանացմամբ մեր գործը վոչ միայն չի սուժի, այլ դաւիլորեն կչահի:

Համեմատեցեք այս գրությունն ըստ իրենց սահ- մանագրությունների ապրող բուրժուական յերկիրնե- րի գրութայն հետ:

Ձկա բուրժուական այնպիսի մի յերկիր—վոչ միայն Ֆաշիստական,—վորտեղ գոյություն չունենան պառ- լամենտների ու կոմունալ հիմնարկների ընտրություն- ների իրավունքի մի շարք սահմանափակումներ, իսկ յերբեմն շատ ել տարբեր տեսակի սահմանափակում- ներ: Այդ վոչ վոք չի կարողանա ժխտել:

Այնտեղ գոյություն ունեն նախ սահմանափակում- ներ՝ ըստ սոցիալական-գույքային վիճակի: Իհարկե՝ հոգուտ ունեւոր դատակարգերի և ընդդեմ քիչ ունե- ցողների:

«Գույքային ցենդ» գոյություն ունի, որինակ, Ան-

դիտարկում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում: Անդրիայում
այն անձերը, վորոնք ապրում են ընտրական մի շրջանում
և ձեռնարկություններ ունեն մի այլ շրջանում,
վայելում են նույնիսկ յերկու ձայնի իրավունք:

Նասակեցության ցենզ գոյություն ունի Ֆրանսիայում,
ԱՄՆ-ում, Ճապոնիայում: Անհրաժեշտ է մի տեղում
6, 12 և նույնիսկ 24 ամիս ապրել՝ ձայնի իրավունք
ստանալու համար: Կապիտալիստական յերկիրներում
տիրող մեծ գործադրության պայմաններում
այդ սահմանափակումների իմաստը պարզ է:

Բացի դրանից, գոյություն ունի այսպես կոչված
«կրթական ցենզ» Անգլիայում, ԱՄՆ-ում, Հունդարիայում:
Յեվ այդ ցենզը ճարպիտրեն ոգտադործվում
է հարուստների կողմից՝ ընդդեմ չքավորների:

Յերկրորդ՝ կապիտալիստական յերկիրներում գոյություն
ունեն ընտրական սահմանափակումներ ըստ
ազգային-առաջադեմ հատկանիշի:

Գերմանական Փրաչեստների հակասեմիտային քաղաքականությունը
քաթածանոթ է: Գերմանիայում այնքան սանձարձակ են դարձել,
վոր նրանց սև հարյուրյակային «հիմնական որենքում» ստված է
վոչ վելի, վոչ պրակաս, քան հետեյալը. «Հրեան չի կարող
գերմանական կայսրության քաղաքացի լինել: Նա
զրկվում է ձայնի իրավունքից քաղաքական հարցերում:
Նա չի կարող պաշտոններ զբաղել»:

ԱՄՆ-ում ծայրահեղության են հասցվել նեգրերի և հնդիկների դեմ
ուղղված սահմանափակումները: Այդտեղ նեգրերի նկատմամբ
գործն այնպես է արված, վոր հարավային հինգ նահանգների
2,2 միլիոն նեգրե-

րից ընտրություններին վաստորեն թուլատրվում է մտնակցել
միայն 19 հազար հոգու:

Անգլիան նույնպես այդ ճանապարհով է ընթանում:
Մեծ Բրիտանիայի մեջ մտնող Հարավ-աֆրիկյան միության
մեջ ձայնի իրավունք ունեն 2,5 միլիոն սպիտակների,
իսկ 5,5 միլիոն նեգրերը զուրկ են ձայնի իրավունքից:

Յերրորդ՝ գոյություն ունեն մեծ սահմանափակումներ
կնոջ իրավունքի նկատմամբ: Բալտիկան և Նասել, վոր
կանայք զուրկ են ձայնի իրավունքից պառլամենտի
ընտրությունների ժամանակ այնպիսի յերկիրներում,
ինչպես են Ֆրանսիան, Բելգիան, Իտալիան, Շվեյցարիան,
Հարավ-Սլավիան, Հունաստանը, Ճապոնիան,
Արգենտինան:

Յես կհիշատակեմ նաև զինվորականների իրավունքների
սահմանափակումները: Վոչ մի յերկրում, բացի Անգլիայից,
վորտեղ բանակը մեծ չէ, զինվորականները չունեն
պառլամենտի ընտրություններին մասնակցելու իրավունք:
Բուրժուական բոլոր յերկիրներում բուրժուական
բանակների զինվորներն ու սպաները զուրկ են
այդ հասարակ քաղաքացիական իրավունքներից:

Յես այլևս որինակներ չեմ բերի ազդաբնակության
իրավունքների սահմանափակումների մասին, վորոնցով
հարուստ են բուրժուական սահմանադրությունները:
Իսկ չե՞ վոր այնտեղ ըիչ չեն «գեմոկրատիայի» մասին
աղաղակել սիրողները:

Մեր ընտրական սիստեմի լիակատար դեմոկրատացումը
լավագույն պատասխանն է խորհրդային դեմոկրատիզմի
ամեն տեսակի այն սահմանափակումներին, վորոնք

1-334394



պատկանում են բուրժուական դեմոկրատներին և սոցիալ-դեմոկրատներին բանակին :

Մի՞թե բուրժուական «դեմոկրատները» քիչ մեղադրանքներ են թափել ԽՍՀՄ-ի պրոլետարական դիկտատուրայի գլխին : Չնայած աշխատավորներին ամենալայն մասսաներն ակնհայտ կերպով պաշտպանում են խորհրդային իշխանությանը, այստեղ ու այնտեղ մեղադրանքներ են հարուցվել խորհրդային ռեժիմի պակաս դեմոկրատիկության դեմ : Նույնիսկ նախկին ռահպարծողներին 2—3 տոկոսին յձայնից զրկելը, յեզր ապահովված և ազդարնակության մյուս 97—98 տոկոսի՝ ընտրություններին մասնակցելու իրավունքը, աշխատում էլին ներկայացնել վորպես դեմոկրատիկ իրավունքների մեծ պակասություն ԽՍՀՄ-ում : Խորհրդային սխտեմի բուրժուական քննադատներին այդ ձեռնածությունները բավ հայտնի յեն :

Այժմ այդ բոլոր հարձակումներին ել ավելի ազդու պատասխան և տալիս խորհրդային Սահմանադրությունը, վորն ավարտում և ԽՍՀՄ-ի դեմոկրատացումը :

Մեծ Լենինը մեզ սովորեցրել և, վոր «դեմոկրատիզմը խորհրդային իշխանության մեջ դիկտատուրային չի հակասում», վոր պրոլետարական դիկտատուրայի ամրացումը նշանակում և իսկական դեմոկրատիզմի աճում, մասսաների դեմոկրատիզմի, աշխատավորության դեմոկրատիզմի աճում : Խորհրդային հանրապետության զարգացման յուրաքանչյուր նոր ետապում մենք անսնում էլինք, վոր ավելի ու ավելի ուժեղնորեն են հաստատվում մեր մեծ ուսուցչի խոսքերը : Այժմ ավելի, քան յերբեիցե, մենք անանում ենք պրոլետարական դիկտատուրայի հաղթանակի վրա հիմնված

սոցիալիստական դեմոկրատիայի վերաբերյալ մարքսիստական-լենինյան ուսմունքի ամբողջ ուժը և բուրժուական դեմոկրատիայի մարքսիստական-լենինյան քննադատության միանգամայն ճիշտ լինելը, մի դեմոկրատիա, վորը ծնված որից սահմանափակված և տիրապետող բուրժուական վորքրամասնության համար հաստատված դեմոկրատիզմի նեղ շրջանակներով :

Նոր Սահմանադրության ընդունումը վկայում և ԽՍՀՄ-ի աշխատավորների վստահությունը դեպի իրենց ուժերը :

Իսկապես, յեթե յերկրի ներսում մենք ջախջախեցինք դասակարգային թշնամուն և որեցոր ավելի յենք ամրացնում մեր սոցիալիստական դիրքերը, ապա առայժմ մենք մնում ենք միակ սոցիալիստական պետությունը և ապրում ենք սոցիալիզմին անհաշտորեն թըշնամի իմպերիալիստական պետություններին ողակում : Իհարկե, Սահմանադրությունը ընդունելով, մենք բնավ չենք մոռանում արտաքին վտանգը, վորն այժմ գլխավոր վտանգն և մեր յերկրի աշխատավորների համար : Բայց և այնպես մեր մեջ տիրում և լիակատար վստահություն, վոր մեր պետական իրավակարգի հետագա դեմոկրատացումն ևլ ավելի կամրապնդի ԽՍՀՄ-ի սոցիալիստական կարգերը՝ հակառակ նրա բոլոր թշնամիներին (ծափահարություններ) :

Կարելի՞ յե արդյոք յերևակայել դրան վորեև չավով նման մի պատկեր, սոցիալիստական պետություններով շրջապատված վորեև—թեկուզ ամենատեղբուրժուական պետության նկատմամբ : Ինքներդ դատեցե՞՛ հաղիվ թե... :

Սոցիալիստական դեմոկրատիզմի ուժը հենց այն և,

վոր առաջ գալով վորպես պրոլետարական դեկտատու-
րայի հաղթանակի արդյունք, նա աճում և ընդարձակ-
վում է որեցոր, մանավանդ մասսաների կուլտուրա-
կանության աճման հետ միասին: Դրանում իր արտա-
հայտությունն և գանում մեր ուժերի հզոր աճումը:
Մեր յերկրում սոցիալիզմը կատարելապես հաղթելուց
հետո, խորհրդային կարգերի դեմոկրատիզմը զարգա-
նում է ավելի մեծ ուժով և ավելի մեծ թափով, իր
հերթին հանդիսանալով սոցիալիզմի ուժերի վերելքի
հետագա արագացման լծակ:

Մեր յերկրում դեմոկրատիզմի զարգացումը ցույց
է տալիս սոցիալիստական դեմոկրատիայի բոլոր առա-
վելությունները՝ բուրժուական պետությունների դե-
մոկրատիայի հանդեպ:

Իայց այստեղ պետք է վորոշ շեղում կատարել ար-
գեն միանգամայն յուրորինակ՝ դերմանալիս Ֆաշիզմի
մեթոդով կերամովոզ «դեմոկրատիզմի» նկատմամբ:

Տիրապետող կապիտալիստական ոլիգարխիայի ձեռ-
բերն ազատ արձակելու համար դերմանական Ֆաշիստ-
ները մասսաներին և հենց նացիոնալ-սոցիալիստական
կուսակցության բոլոր անդամներին հետևողականորեն
այսպիսի հայացք են պատմաստում. «Իմ առաջնորդ-
ները գիտեն, թե ինչ են ուզում: Իսկ յեթե
նրանք այդ չիմանային, ապա յես ինչպես կարող եյի
այդ իմանալ և վճռել»: Պարզ ասած՝ դա մի «դեմո-
կրատիզմ» է, հետևյալ սկզբունքով. «Չհամարձակվես
զատողություն անել, հենց քեզ համար ավելի վատ
կլինի»:

Այդ պատճառով նյուրենբերգյան այդ բոլոր համա-
դումարները ա՛յնքան հեռու յեն իսկական համադոս-

մարների նմանվելուց: Դրանք համադումարներ չեն,
այլ ինչ-վոր ուրիշ բան:

Այդ համադումարներում հավաքվում են միմիայն
«Ֆյուրերներ» 2—3 ճառը լսելու համար: Այդ համա-
դումարներում վոչ մի քննարկում, վոչ մի վիճարանու-
թյուն չի լինում: Այնտեղ վոչ մի վորոշում և բա-
նաձև չի քվեարկվում: Մասսաներին թույլ է տրված
միայն մի բան՝ խփշտել այդ տեսակ համադումարնե-
րի հետևանքները...

Որհրդային դեմոկրատիզմի համեմատումը բուր-
ժուական յերկիրների դեմոկրատիզմի հետ, նույնիսկ
վերջինիս լավադույն ձևերի հետ, վկայում է առաջինի
արմատական տարբերությունը և սկզբունքային առա-
վելությունները՝ համեմատած յերկրորդի հետ: Պարզ
է մի բան՝ միմիայն սոցիալիստական դեմոկրատիզմն
է հանդիսանում աշխատավորների դեմոկրատիզմը,
չահազորձողների տիրապետությունից ազատագրված
ժողովրդական մասսաների իսկական դեմոկրատիզմը:

Ով ուզում է համոզվել մեր կարգերի դեմոկրատիզ-
մի մեջ, նա չպետք է մոռանա զլիսավորը: Իսկ խոր-
հրդային կարգերում զլիսավորը, ինչպես հայտնի յե,
այն է, ինչ բացատրված է Սահմանադրության 6-րդ
հոդվածում:

Ահա այդ «հաղված 6-րդը».

«Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, դոս-
ժարանները, Ֆաբրիկաները, հանքահորերը, հանքերը,
յերկաթուղային, ջրային և ողային տրանսպորտը,
բանկերը, կապի միջոցները, պետության կազմակեր-
պած խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները
(խորհրդատեսությունները), մեքենատրակտորային կա-

յանները և այլն), ինչպես և հիմնական բնակարանա-
յին Փոնդը քաղաքներում ու արդյունաբերական կե-
տերում, հանդիսանում են պետական սեփականու-
թյուն, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածք»
(ծափահարություններ) :

Այժմ այդ բոլորը պատկանում և ԱՄԻՈՂԶ ԺՈՂՈ-
ՎԸՐԴԻՆ :

Ել ուրիշ ինչպիսի՞ր ավելի հետևողական դեմոկրա-
տիա յե պետք :

Թող ամեն մի պետութայն մեջ իրականացնեն
նման միջոցներ և այն ժամանակ մենք այդպիսի պե-
տութայն դեմոկրատիզմը կձանաչենք նույնպիսի իս-
կական ՀՄՄԺՈՂՈՎԸՐԴԻՆԱԿԱՆ ԴԵՄՈՂԱՏԻՉՄ, ինչ-
պիսին և դեմոկրատիզմը ԽՍՀՄ-ում (ծափահարու-
թյուններ) :

Նոր սահմանադրությունն այժմ ԽՍՀՄ-ի բնույթ
քաղաքացիներին տալիս և հավասար իրավունքներ :
Կարելի յե նույնիսկ ասել, վոր նախկին սեփականա-
տերերը վերագարձել են, թեպետ և հատուկ ձևով,
սեփականութայն կառավարման : Բայց այժմ աշխա-
տավորների խորհուրդների միջոցով մասնակցելով այդ
գործին, նրանք անչափ ավելի հարուստ են դարձել,
վորովհետև մասնակցում են վոչ թե մասնավոր, այլ
համաժողովրդական սեփականութայն կառավարմանը
(ծափահարություններ) :

Մեր յերկրի աշխատավորներն այդ հարցում ունեն,
իհարկե, իրենց խոր կարծիքը, «նախկին» մարդիկ
իրավունքներ են ստանում, այդ վատ չե, միայն թե
նրանք աղնվորեն աշխատեն :

Մեր կարգերի դեմոկրատիզմն քննելը Ստալինն իր

դեկուցման մեջ շեշտեց մի նշանավոր փաստով ևս՝
«Խորհրդային իշխանությունը լիկվիդացրա՛յի
յենթարկեց կալվածատերերի դասակարգը և նախ-
կին կալվածատիրական, արքունի ու վանքապատ-
կան ավելի քան 150 միլիոն հեկտար հողը հանձ-
նեց գյուղացիներին, և այս—բացի այն հողերեց,
վոր առաջնորդում ել գյուղացիներին ձեռքում եյին
դանվում» :

Մենք կուզենայինք տեսնել, թե ինչպես վորևե
բուրժուական պետութայն մեջ առանց վերկաշնի գյու-
ղացիներին կհանձնեյին թեկուզ վոչ թե 150, այլ
միայն 15 միլիոն հեկտար (ծափահարություններ)
կալվածատիրական և այլ հողեր : Այն ժամանակ մենք
պատրաստ կլինեյինք ընդունելու, վոր այդպիսի պե-
տությունը սկսում և լրջորեն մոտենալ իսկական դե-
մոկրատիզմին (ծափահարություններ), աշխատավոր-
ների դեմոկրատիզմին :

Այնինչ, չենք լսել, վոր կալվածատերերը, աղը-
վախանները և վանահայրերը իրենց դասակարգային
տեսակետից «դեմոկրատիկ» գործ համարեյին գյուղա-
ցիներին հող հանձնելը : Չի կարելի չհամաձայնել,
վոր նրանց խորթ և հեղափոխական դեմոկրատիզմը :

Մեր յերկրում իշխանութայն գլուխն եյին կանդ-
նաձ նա՛ւ ետերների և մենչեիկների թվին պատկանող
պարոնայք սոցիալիստները՝ 1917 թվականին : Բոլորն
ել դիտեն, վոր նրանք իշխանությունն ոգտագործե-
ցին վոչ թե հողը գյուղացիներին հանձնելու, այլ այդ
գործը ձղձղելու համար :

Նրանք այստեղ ևս կալվածատերերի ու բուրժուա-
զիայի ուղղակի դաշնակիցները հանդիսացան : Բայց

ինչպես էին պարծենում նրանք «ղեմոկրատիայի» հանդեպ իրենց ունեցած նվիրվածությամբ: Նշանակում է, մեր ժամանակներում մենչևիկյան-եսերական «ղեմոկրատիան» ձեռնտու յե կապիտալիստներին, կալվածատերերին, կուլակներին, ազնվականներին ու տերտերներին (ծափահարություններ): Նշանակում է մենչևիկորեն, եսերորեն հասկացվող «ղեմոկրատիան» այժմ վոչ մի առնչություն չունի ժողովրդին աշխարհի հարկավոր իսկական ղեմոկրատիայի հետ:

Խորհրդային ղեմոկրատիզմի մի որինակ ևս:

Ինձնից առաջ հանդես յեկավ հայտնի գրող Ա.Ն. Տոլստոյը: Ո՞վ չգիտե, վոր դա նախկին կոմս Տոլստոյն է: Իսկ ա՞յժմ: Խորհրդային յերկրի ամենուրեք և ամենաժողովրդական գրողներից մեկը՝ ընկեր Արեքսեյ Նիկոլայեվիչ Տոլստոյն է (ծափահարություններ):

Այստեղ մեղավորը պատմությունն է: Բայց փոփոխությունը հո դեպի լա՞վ կողմն է կատարվել: Դրան համաձայն ենք մենք բոլորս, հենց Ա.Ն. Տոլստոյի հետ միասին:

Նոր Սահմանադրությունն ե՛լ ավելի կամրացնի մեր խորապես ղեմոկրատիկ կարգերը: Իսկ նրանով, վոր Սահմանադրության մեջ ԽՍՀՄ-ի քաղաքացիների փորոչակի պարտավորությունները պարզորոշ կերպով մատնանշվելու հետ մեկտեղ հաստատապես ապահովվում են այնպիսի իրավունքներ, ինչպես են՝ աշխատանքի իրավունքը, հանգստի իրավունքը, ծերության նյութական ապահովման իրավունքը, կրթության իրավունքը, կանանց լիակատար հավասարությունը տղամարդկանց հետ, ազգերի և ռասաների լիակատար

հավասարությունը ԽՍՀՄ-ում և այլն—մենք բարձրաձայն հայտարարում ենք, թե ինչպես պետք է հասկանալ սոցիալիստական ղեմոկրատիզմը:

Բուրժուական պետության մեջ ղեմոկրատիայի նույնիսկ ամենակատարյալ ձևերը գործնականում չափազանց սահմանափակված և ծայրահեղորեն սեղմված են ժողովրդի վրա բուրժուական փոքրամասնության ունեցած փաստական տիրապետության շրջանակներով: Կապիտալիստական ռեժիմի պայմաններում վոչ մի ղեմոկրատիզմ չի դուրս գալիս և չի կարող դուրս գալ բուրժուական դասակարգերի արտոնյալ փոքրամասնության տիրապետության շրջանակներից, ժողովրդի իրավունքներն ու ազատությունները ղետեղելով սրբուհրուստյան կոշտ անկողնում:

Բուրժուական իր իդեոլոգիաների և իր մամուլի միջոցով հասավ այն բանին, վոր կապիտալիստական խղճուկ ղեմոկրատիան, բուրժուական պետությունների ղեմոկրատիան, սովորաբար վառաբանվում է վորպես ղեմոկրատիզմ ընդհանրապես, վորպես ղեմոկրատիայի «վերդասակարգային» ձև կամ նույնիսկ վորպես ղեմոկրատիզմի «համամարդկային» ձև: Բուրժուազիայի և սոցիալ-ղեմոկրատիայի քաղաքագետները ու «թեորետիկները» ձեռքի ճարպիկությունն այդ տեսակետից հասել է լարախաղացի արվեստին:

Բայց իբրք վոչ մի բուրժուական պետություն աշխատավորներին չի տվել և չի տալիս նույնիսկ փոքր մասն այն իրական ղեմոկրատիկ իրավունքների ու ազատությունների, վորոնք վայելում են ԽՍՀՄ-ի աշխատավորները և վորոնք ավելի մեծ չափով վայելե-

լու յեն այսուհետև նոր Մահմանադրությամբ (բուսմ
ծափահարություններ) :

Բուրժուական դեմոկրատիզմը «Համաժողովրդական
դեմոկրատիզմի» անվան տակ փառաբանում է լավա-
զույն զեպչում աշխատավորների վերին աստիճանի
պոչատ իրավունքները բուրժուական կարգերում, վոր-
տեղ մամուլը, տպարանը, թուղթը, շենքերը, ամբողջ
կապիտալը և ամբողջ իշխանությունը, հետևաբար
փաստորեն նաև բոլոր իրավունքները զտնվում են տի-
րապետող դասակարգերի ձեռքում, իսկ աշխատավոր-
ներին մնում են միայն փշրանքները աղալի սեղանից :

Յեվ, այնուամենայնիվ, բանվորները և մյուս աշ-
խատավոր խավերը սովորել են նույնիսկ պոչատ բուր-
ժուական ազատությունները, նույնիսկ սահմանափակ
դեմոկրատիկ իրավունքներն ոգտազործել հոգուտ ի-
րենց շահերի՝ մասսաների քաղաքական լուսավորու-
թյան համար, ուժերն առաջիկա մարտերին հարկավոր
չափով պատրաստելու համար : Ուստի հասկանալի յե,
վոր կապիտալիզմի յերկիրներում բանվորները և բո-
լոր դեմոկրատիկ տարրերն այդպիսի համառ պայքար
են մղում նույնիսկ վորք բուրժուական-դեմոկրատա-
կան ազատություններն ու իրավունքները պահպանելու
և ընդարձակելու համար :

Բայց մյուս կողմից, այդ իսկ պատճառով, տիրա-
պետող բուրժուական դասակարգերը, այնտեղ, վոր-
տեղ նրանք արդեն կորցրել են մասսաների վրա ազ-
դեցություն գործելու հնարավորության հավատը,
անցնում են բացահայտ բուրժուական-տեռորիստական
դիկտատուրայի Փաշխտական մեթոդներին : Իհարկե,
կարելի յե ասել, վոր այդպիսի միջոցներով, ինչպի-

սիք են տեռորը և անթիվ բռնությունները մասսանե-
րի նկատմամբ, յերկար չես դիմանա : Սակայն Փա-
շխտական բուրժուազիան յերևի այսպես և դատում՝
թեկուզ մի ոք, բայց իմը վինի :

Կարելի՞ յե միթե զարմանալ, վոր վոչ միայն բան-
վորներն ու դյուզադիները, այլև մանր, իսկ յերբմն
նաև միջակ բուրժուազիային պատկանող բոլոր ալնիվ
դեմոկրատական տարրերը զնալով ավելի բացահայտու-
րեն հրաժարվում են Փաշիզմին և Փաշխտորեն դոր-
ծող խմբակներին ոժանդակություն ցույց տալուց :

Թե վորքան արագ են նեխվում Փաշխտական հիմ-
քերը, այդ յերևում է արդեն շատ փաստերից : Այժմ
Փաշխտները վոչ միայն վորեւե դեմոկրատիկ մնա-
ցորդ չեն հանդուրժում իրենց յերկիրներում, վորտեղ
ստանց այն ել «լուծմ են, վորովհետև բարոր կյանք
են վարում» : Բնորոչ է, վոր Փաշխտներն իրենց
համար վտանդ են տեսնում նույնիսկ դեմոկրատիզմի
դյուրթյան փաստի մեջ, նույնիսկ յերբ խուզը վերա-
բերում է Այուս յերկիրներին դեմոկրատիզմին :

Ուստի առանց հաշիի առնելու պետական սահման-
ները և խախտելով միջազգային բոլոր իրավունքներն
ու սովորութիւնները, բոլորին հայտնի պետություննե-
րի Փաշխտները, սուրը ձեռքին, ողում, դեմանական
«հայնկեր»-ներով և իտալական «սովոյա»-ներով մի-
ջամտում են մյուս պետության ներքին դործերին,
վորտեղ ժողովուրդը չի ուզում հանդուրժել նրանց
նման պտրոններին : Զուր չե, վոր մի քանի բարի
մարդիկ, տեսնելով այդ բոլորը, վշտանում են Փա-
շխտների համար . թե՛ ինդճե՛ր, արդյոք չի՞ այրվում

նրանց վտուքի տակի հողը, վայ թե նրանք կտորեն
իրենց վիզը...

Մեր վերաբերմունքը դեմոկրատիզմի, վորպես աշ-
խատավորների համար ամենաարժեքավոր բարիքներից
մեկի հանդեպ, հայտնի յե: Մեր սրտին մոտ են դե-
մոկրատիայի հաջողութուններն ամեն մի յերկրում:
Մենք ուրախանում ենք դեմոկրատական իրավունքնե-
րի նվաճումների առթիվ, վորտեղ ել վոր առաջ ըն-
թանան ժողովրդական մասսաներն այդ ճանապարհով:

Մենք չենք կարող ընդհանուր լեզու ունենալ Փա-
շիզմի հետ, վորի վտանգը մենք մտադիր չենք վոչ
նվազեցնել, վոչ ել չափազանցնել: Սակայն մենք մեր
ամբողջ հողով, այն ել դործնականորեն, նրանց հետ
ենք, ովքեր պայքար են մղում Փաշխատ ուսկիցիոներ-
ների դեմ: Մենք ամբողջովին նրանց հետ ենք, ում
համար թանգ են «ամբողջ առաջավոր ու սրտգրեսիվ
մարդկության» (Մտալին) շահերը:

Նոր Սահմանադրության ընդունումը ե՛լ ավելի
բարձրացնում ե իՍՂՄ-ն իբրև դեմոկրատիզմի հենա-
րան ու փարոս:

Նոր Սահմանադրության ընդունումը՝ նրա բաղա-
կողմանի պետական դեմոկրատացման հետ մեկտեղ,
վոր ընդարձակում ե հետագա ավելի լուրջ հաջողու-
թյունների հնարավորութունը իՍՂՄ-ի ժողովուրդների
ամբողջ կյանքը բարելավելու ասպարեզում, անդնահա-
տելի ոգնութուն ցույց կտա միջադպրոցին սոցիալիզ-
մին ե կանդրադառնա այն պայքարի վրա, վոր մղում
են բանվորները, դյուղացիներն ու բոլոր ճնշվածները
հանուն իրենց իրավունքների, հանուն լիակատար կեր-

պով ազատագրվելու Փաշիզմից ե կապիտալիզմից,
վորը ծնում ու սնում ե Փաշխատական ուժի մեծերը:

Ստալինյան Սահմանադրութունը վորքան ավելի
խոր կերպով մտնի մեր կյանքի մեջ, այնքան բաղա-
կողմանի կլինի նրա ազդեցութունը, վորպես սոցիա-
լիզմի ե հետևողական դեմոկրատիզմի սահմանադրու-
թյուն վոչ միայն մեզ մոտ, այլև իՍՂՄ-ի սահմաննե-
րից շատ հեռու: Այնքան ավելի կտարածվի նրա հե-
ղափոխական ներդրութունն աշխատավոր մասսա-
ների վրա, վորոնք պայքար են մղում հանուն իրենց
ազատագրման՝ Փաշիզմից, իմպերիալիզմից ու դադու-
թային ճնշումից:

III. ԽՍՀՄ ՅԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Նոր Սահմանադրութիւնն արտահայտում է սոցիալիստական ինտերնացիոնալիզմի հետադարձ զարգացումը ԽՍՀՄ-ի ժողովուրդների հարաբերութիւնների մեջ:

Այն ամենը, ինչ խոսվեց այս համադրումարում, հաստատում է, վոր այս Սահմանադրութեամբ մենք նոր քայլ ենք կատարում Խորհրդային Միութեան ժողովուրդներէ մեծ բարեկամութիւնն ամրապնդելու գործում: Մենք այստեղ ևս առաջ ենք մղում Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութեան սկսած գործը:

Ազգային հարցի լուծումը Խորհրդային Միութեան մեջ՝ մեր ժամանակվա ամենաուսանելի փաստերից մեկն է: Իրանում արտահայտվում է լենինյան-ստալինյան ազգային քաղաքականութեան սկզբունքների ուժը և Խորհրդային իշխանութեան համատարմութիւնը հետեոյական ղեմնկրատիւզմին:

Մենք ազգային հարցի ճիշտ լուծումը գտանք իրենց անտեսական կացութեան ձևով և կենցաղով, սրտամական անցյալով ու ազգային կուլտուրայով միմյանցից անչափ տարբեր ժողովուրդների բարեկամութիւնն ամրապնդելու հիման վրա: Մենք հասանք դրան, ջնայած այն բանին, վոր ցարական հին Ռուսաստանի կողմից ճնշվող բազմաթիւ ազգութիւնների մեջ չեք կարող

չպահպանվել մեծ անվստահութիւնն դեպի ռուսները, վորպես անցյալում ճնշող ազգի ներկայացուցիչներ:

Վոչ մի բուրժուական յերկիր, թեկուզ և նա գոյութիւն ունեցած լինէր արդէն հարցուբարակներ, չկարողացաւ իր մոտ գտնել ազգային հարցի ճիշտ լուծումը, ինչպես այդ մասին խոսք լինել չեք կարող նաև հին բուրժուա-կալվածատիրական Ռուսաստանում: Այդ մեր յերկրում հնարավոր յեղաւ շնորհիւ սոցիալիզմի հաղթանակի, վորն սպահովեց հետեոյական ղեմնկրատիւզմի կիրառման հնարավորութիւնը, շնորհիւ ազգութիւններէ իսկական իրավահավասարութեան և շնորհիւ այն հատուկ հողատարութեան, վոր ցուցաբերեց պետութիւնն առավել թույլ և անցյալում առանձնապէս ճնշված ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ:

Մեզ մոտ կազմավորված և ամրապնդվող՝ ժողովուրդների բարեկամութեան նման վորեւէ բան չի կարելի պատկերացնել բուրժուական ռեժիմի պայմաններում, վորտեղ բոլոր պայմաններում իշխում են տիրապետող ազգի տիրապետող դասակարգերը: Ըստ վորում, յերբեմն զանազան ազգերի տիրող դասակարգերի վերնախավերը համաձայնութեան են դալիս միմյանց հետ և քիչ թե շատ ընդհանուր լեզու յեն գտնում, ճնշողների լեզու՝ համապատասխան ազգութիւնների ժողովրդական մասսաների նկատմամբ: Բայց այդ դեպքում ևս ճնշված ազգութեան աշխատավորները, առանձնապէս գաղութներում ու կիսագաղութներում, մնում են կրկնակի ճնշման տակ—«իրենց» չահագործողների ճնշման տակ, և բացի այդ՝ տիրապետող ազգի հատուկ ճնշման տակ:

Խորհրդային Միության մեջ տեղի յե ունենում բազմաթիվ ազդու թյունների վերածնություն, տեղի յե ունենում բոլոր ժողովուրդների տնտեսական ուժերի ու ազդային կուլտուրաների վերելք: Դրա հետ միասին, ամբապնդվում է նաև Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների բազմազգ Միությունը, վորպես միասնական մի ամբողջություն:

Խորհրդային էլիտանությունը գոյություն էր ունենալ յերկրի յերեսին, յեթե գործնականում մեծազույն հողատարություն չցուցաբերել յերկրի բոլոր ժողովուրդների կարիքների նկատմամբ, նրանց տնտեսական վերելքի նկատմամբ, աշխատավորների նյութական բարեկեցություն վերելքի ու ազդային կուլտուրաների աճման նկատմամբ: Ըստ վորում, ԽՍՀՄ-ն վարում է կապիտալիզմի ժամանակ առավել հետամնաց ու առավել ճնշված ազդու թյուններին ուժեղ ու ժանդակություն ցույց տալու քաղաքականություն, դրանով իսկ արդացնելով նրանց բարձրացնելն ու ընդհանուր մակարդակին հասցնելը:

«Միասնական-անբաժանելի» Ռուսաստանից առաջ յեկան ալեկի քան 50 հանրապետություններ, ինքնավար մարզեր ու ազդային չրջաններ: Առանց ԽՍՀՄ-ում ազդային-պետական միավորներ առանձնացնելու՝ խոսք անդամ լինել էր կարող ադատ ազդային զարգացման մասին, ել չենք խոսում անցյալում ճնշված ազդու թյունների մեջ՝ ասենք թեկուզ դեպի վելիկոուսներն առաջ յեկած անվատահություն վերացման մասին: Բազմաթիվ ազդային հանրապետություններ ու մարզեր ստեղծելը վոչ միայն չթուլացրեց մեր պետությունը, այլև ալեկի ամբապնդեց այն (ծափահարություններ):

Նոր Սահմանադրությունը նշանակում է հետագա քայլ ԽՍՀՄ-ի ժողովուրդների միջև բարեկամություն ամբապնդելու ուղիով, մեր յերկրում սոցիալիստական ինտերնացիոնալիզմի զարգացման ուղիով: Այդ կարելի յե ընդդեմ մի շարք կարևոր որինակներով:

Սահմանադրությունը 7-ից մինչև 11-ի յե հասցնում միութենական հանրապետությունների թիվը, այսինքն այնպիսի հանրապետությունների, վորոնք իրավունք ունեն ազատ կերպով դուրս գալու ԽՍՀՄ-ից: Դրանով կրկին անդամ ընդդվում է վոչ միայն ազդային զարգացման ազատությունը մեր յերկրում, այլև մեր Միությունը ստեղծած ազդու թյունների միավորման կամավորությունը:

Նոր Սահմանադրության մեջ ալեկի՝ խստորեն են սահմանադրվում Միության և նրա կազմի մեջ մանող միութենական հանրապետությունների ֆունկցիաները: Ընդամին, ԽՍՀՄ-ի առանձին նոր ժողովուրդներ ստեղծելու դուրքնից, ամբողջ շարք նոր արդյունաբերական ժողովուրդներ են ստեղծվում միութենական հանրապետություններում՝ շատ ձեռնարկություններ համամիութենական կառավարումից հանձնելով հանրապետությունների իրավասությունը:

Դուք այստեղ լսեցիք ընկեր Ստալինի առաջարկը՝ Գերագույն Խորհրդի յերկու պալատների անդամների թիվը հավասարեցնելու և վոչ միայն Միության Խորհրդի պատգամավորների, այլև Ազդու թյունների Խորհրդի պատգամավորների համար ուղղակի ընտրություններ սահմանելու մասին: Այդ առաջարկի կիրառումը կապահովի բոլոր և առանձնապես պակաս ուժեղ հանրապետությունների ներկայացուցչություն հե-

տաղա ավելացումը Գերազույն Խորհրդի մեջ և կրար-
ձրացնի Ազգությունների Խորհրդի հեղինակությունը :
Չի կարելի չխոստովանել, վոր այդ առաջարկը համա-
պատասխանում է ԽՍՀՄ-ի ժողովուրդների բարեկա-
մության հետադա ամրապնդման գործին և լիովին
համապատասխանում է սոցիալիզմի շահերին (ծափա-
հարություններ) :

Մեր նոր Մահմանադրության մեջ այսպես են հան-
դես դալիս սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ձե-
վերի զարգացման հիմնական մոմենտները :

Հենց սրբից խորհրդային իշխանությունն իր առջև
ինդիք էր դրել ապահովել ազգամիջյան խաղաղու-
թյունը մեր բազմազգ յերկրում : Դրա մեջ նա տեսնում
էր սոցիալիզմի հաջողությունն ապահովելու դիսպոր
սրայմաններից մեկը :

Պետական շինարարության ձևերի հարցը միշտ
յենթարկելով սոցիալիզմի արմատական շահերին և
պրոլետարական դեկտատուրայի ամրապնդման ինդիք-
ներին, մեր կուսակցությունը յուրաքանչյուր ետա-
պում դտնում էր լենինյան-ստալինյան ազլային քա-
ղաքականության, ժողովուրդների միջև բարեկամու-
թյունն ամրապնդելու քաղաքականության կիրառման
իր հատուկ ձևերը : Մեր բազմազգ պետության մեջ
հաջողվեց գործնականում ապահովել ազգային կուլ-
տուրաների արագ վերելքը՝ նրանց ամբողջ բազմերանդ
զանազանությամբ, և դրա հետ միասին գործնականում
ապահովել խաղաղությունն ու բարեկամությունը Մի-
ության բոլոր ժողովուրդների միջև :

Վո՛րքան հույսեր եյին կապում մեր թշնամիները
ԽՍՀՄ-ի ազգամիջյան յերկպառակցությունների հետ,

այդ գործում սնանկացան վորքա՞ն ազգայնական կու-
տակցություններ, վորոնց կերակրում էր վոչ միայն
ազգային, այլև ոտարերկրյա բուրժուազիան :

Մեր յերկրում, վորտեղ բոլոր ազգերի աշխատա-
վորներն ընդհանուր ջանքերով ցած գլորեցին «իրենց»
և ոտար շահագործողներին, վորտեղ բոլոր ժողովուրդ-
ների հարաբերությունների մեջ գործնականում ապա-
հովիւած է լիսխատար իրավահավասարությունը, վոր-
տեղ չտեսնված արագությամբ առաջ է ընթանում ազ-
գային կուլտուրաների վերածնությունը և վորտեղ
ապահովված է բոլոր ժողովուրդների մասնակցու-
թյունը Միության ընդհանուր գործերի լուծմանը՝
հետևողական դեմոկրատիզմի հիման վրա, — այդպիսի
յերկրում հող չկա ազգամիջյան բաղխումների համար :

Այնպիսի մի յերկիր, ինչպես Խորհրդային Սոցիա-
լիստական Հանրապետությունների Միությունն է,
կարող է և պետք է դառնա ժողովուրդների միջև ել
ավելի լայն, ինտերնացիոնալ մասշտաբով խաղաղու-
թյուն և բարեկամություն հաստատելու նախապատ-
կերը (ծափահարություններ) :

Մեր՞ դատակարգային թշնամիները, թվում է, թե
պետք է արդեն համողվեն, վոր մեր յերկրի հաշվին
շահվելու վերաբերյալ իրենց բոլոր հաշիվները կա-
ուուցված են ավազի վրա : Յեվ այնուամենայնիվ նրան-
ցից առավել անհամբերներն այժմ ել իրենց հաիչտա-
կողալան պլանների մեջ Ասիայում ու Յեվրոպայում,
ինչպես յերևում է, չեն ցանկանում հրաժարվել մեր
ներքին գործերին դրսից միջամտելու իմաստով ամեն
տեսակ նոր պլաններ հորինելուց :

Վերջին ժամանակներս ընդհանուր ուշադրություն

գրավեցին իրենց վրա Բեռլինում իբր թե «կոմունիզմի դեմ» կնքված գերման-ճապոնական համաձայնության վերաբերյալ հաղորդագրությունները: Բայց ամբողջ աշխարհում այնպես են հասկացել, վոր հրապարակված պայմանագիրը սոսկ մի վարագույր է գերմանական ու ճապոնական իմպերիալիստների դադունի հափըտակողական և մասնավորապես հակախորհրդային պլանների քողարկման համար:

Նշանակում է, մենք չենք կարող անցնել այդ վոչ այն է՝ չարագանց կասկածելի պայմանագիրներին, վոչ այն է՝ պարզապես դավադիրներին կողքով:

Սկսենք գերմանական կողմից:

Ըստ յերևութին գերմանական Փաշխտները գրտնում են, վոր իրենք արդեն բավականաչափ բարեխալել են իրենց ներքին դործերը, վորպեսզի այժմ ընդհուպ գրազվեն արտաքին կարգի ավանտյուրաներով, ընտրելով այդ դործի համար արժանավոր դաշնակիցներ: Ծատերը հավանորեն հաճույքով կհամաձայնվեն, վոր գերմանական Փաշիզմն արդեն բավականաչափ բախտավորեցրել է իր ժողովրդին:

Վոչ այլ անդ, բայց յիթե այդ Փաշխտների իշխանության ներքո, ըստ յերևութին, արդեն բոլորը յերջանիկ են ու սպահովված, կուշտ են և ուրախ, հանդիստ են և վերին աստիճանի դոհ: Իսկ գերմանական քաղաքներում պարենային հերթերի մեծանալու մասին Փաշխտները հանդատացնող տոնով ամենուրեք հայտարարում են, թե՛ ընակչության համար հացն ու յողը պակասել է, բայց դրա փոխարեն Փաշխտների թնդանոթներն ու արկերն ավելացել են, դրա փոխարեն

կրուպպի դործարանները գլշեր-ցերեկ աշխատում են Փաշխտների համար:

Կուլտուրայի և կուլտուրական մարքիանց ծանր դրությունը Գերմանիայում փութաջանորեն փոխարինվում է չքեղ դորահանդեսներով ու ճառերի արդեն ճանճրացրած ճոճոցով: Չնայած դրան, ներքին «հանդըստացումը» գերմանական Փաշխտները կարող եյին պատկերավորել իրենց համակենտրոնացման ճամբարների ու բանտերի տաժանակրային ուսիմի կայունությամբ, համակենտրոնացման ճամբարների ու բանտերի, վոր լցվում են նորանոր առաջավոր բանվորներով ու ինտելիգենտներով, վորոնց համար պարզապես թանգ են կուլտուրայի շահերը:

Իսկ ամենից հասարակ կերպով Փաշիզմը Գերմանիայում «լուծեց» աղքային հարցը, ջախջախելով հրեաներին, ըստ վորում անխտիր՝ և՛ ծերերին, և՛ փոքրահասակներին, և՛ Փաշիզմի հանդեպ թշնամական վերաբերմունք ունենալու մեջ մեղավոր հանդիսացողներին, և՛ անմեղներին: Անտիսեմիտների վերաբերմամբ այժմ առիթ է լինում հիշելու ընկեր Ստալինի այն վոչնչացնող խոսքը, վորով նա 1931 թվականի հունվարի 12-ին պատասխանեց Ամերիկայի հրեական հեռագրական դործակալության արած հարցումին:

Ընկեր Ստալինն այն ժամանակ իր պատասխանի մեջ գրել է.

«Պատասխանում եմ ձեր հարցումին: Ազգային ու ռասայական շովինիզմն այն մարդատյաց բարքերի մնացորդն է, վորոնք հատուկ եյին կաննիբալիզմի ժամանակաշրջանին: Անտիսեմիտիզմը, վորպես ռասայական շովինիզմի ծայրահեղ ձև,

հանդիսանում է կաննիբալիզմի առավել վտանգա-
վոր մնացորդը: Անտիսեմիտիզմը ձեռնառու յե շա-
հագործողներին՝ վորպես շանթարգել, վորը կա-
պիտալիզմին դուրս է բերում աշխատավորների
հարվածի տակից: Անտիսեմիտիզմը վտանգավոր է
աշխատավորների համար՝ վորպես կեղծ կաճան,
վորը շեղում է նրանց ճիշտ ուղուց և հասցնում է
ջունգլիները:

Այդ պատճառով, կոմունիստները վորպես հե-
տևողական ինտելեկտուալիստներ, չեն կարող
անտիսեմիտիզմի անհաշտ և վոխերիմ թշնամիները
չլինել: ԽՍՀՄ-ում խատազույն կերպով հետապնդ-
վում է անտիսեմիտիզմը, վորպես խորհրդային
կարգերին խորապես թշնամի յերևույթ: ԽՍՀՄ-ի
որենքներով ակտիվ անտիսեմիտները պատժվում
են մահապատժով:

Ի. ՄՍԱԿԻՆ»

(Ծափահարություններ):

Գերմանական Փաշիստներն իրավամբ արժանացան
ժամանակակից կաննիբալների հերոսաբառյան փառ-
քին, կաննիբալներ, վոր մեր լեզվով նշանակում է
ժամանակակից մարդակերներ (ծիծաղ, ծափահարու-
թյուններ):

Նրանց մեջ կան ավելի քան բավականաչափ մար-
դիկ, վորոնք սիրում են կլասիֆիկացիայի յենթարկել
ժողովուրդներն ու ռասաներն ըստ ամեն տեսակ կատե-
գորիաների: Բայց չե՞ վոր մենք, խորհրդային մար-
դիկս, նույնպես կարող ենք մեր կարծիքը հայտնել
այդ մասին:

Մենք գերմանական մեծ ժողովրդի նկատմամբ վոչ

մի այլ զգացմունք չունենք, բայց բարեկամության և
անկեղծ հարգանքի զգացմունքից (բուռն ծափահարու-
թյուններ), սակայն ամենից լավ կլիներ պարոն Փա-
շիստներին դասել այնպիսի ազգի՝ «բարձր» կարգի
«ազգի» շարքը, վորը կոչվում է ժամանակակից կան-
նիբալ-մարդակերների «ազգ» (ծափահարություններ):

Իսկ մեր վերաբերմունքը դեպի հրեա ժողովուրդը
բղխում է մեր լեհինյան-ստալինյան ազգային քաղաքա-
կանության հիմքերից և շատ յերկիրներում հրեաների
ունեցած ճնշված դրությունից:

Ավելորդ է ծանրանալ այն հարցի վրա, վոր հրեա
ազգի կապիտալիստներին և հակահեղափոխականներին
մենք վերաբերվում ենք վորպես շահագործողների և
մեր դործի թշնամիների (ծափահարություններ):

Սակայն ինչ էլ ասեն Փաշիստ-անտիսեմիտների
թվին պատկանող ժամանակակից կաննիբալները, մեր
յեղբայրական զգացմունքները դեպի հրեա ժողովուրդը
վորոչվում է այն բանով, վոր նա ծնել է մարդկու-
թյան կոմունիստական ազատագրման զաղափարների
հանճարեղ ստեղծողին և գերմանական կուլտուրայի
ու մյուս ժողովուրդների կուլտուրաների բարձրագույն
նվաճումներին գիտականորեն տիրապետած՝ կարլ
Մարքսին (ծափահարություններ), վոր հրեա ժողո-
վուրդն ամենազարգացած ազգերի հետ միասին տվել է
գիտության, տեխնիկայի ու արվեստի բազմաթիվ խո-
շորագույն ներկայացուցիչներ, տվել է շատ պանծալի
հերոսներ ճնշողների դեմ աշխատավորների մղած հե-
ղափոխական պայքարում, և մեր յերկրում հանդես է
բերել ու հանդես է բերում նորանոր հրաշալի, տա-
ղանդավոր գեկալարներ ու կազմակերպիչներ՝ շնա-

բարութեան բոլոր ճյուղերում և սոցիալիզմի գործի պաշտպանութեան օտպարեզում (յերկարատև ծափահարութեան) : Այս բոլորով վորոշվում է մեր վերաբերմունքը դեպի անտիսեմիտները և անտիսեմիտական դադանութեանները, վորտեղ ել տեղի ունենան դրանք :

Մեզ համար պարզ է, վոր գերմանական Փաշիզմը, լուծելով իր ներքին հարցերն անտիսեմիտական-կաննի-բալական ջաղաքականութեան կիրառելու յեղանակով, իր սեփական ձեռքով վորջնջացնող դատավճիռ է ստորագրում իր ամբողջ ներքին ջաղաքականութեան նկատմամբ :

Այնուամենայնիվ այդ պարունները գտնում են, վոր իրենց ներքին գործերն իրենք վատ չեն կատարում : Չե՞ վոր ռայխստագի հրկիզումը նրանց ողնեց իշխանութեան դուրս անցնելու և իրենց յերկրում դեմօկրատիզմի մնացորդներին վերջ տալու :

Մյուս կողմից՝ ի՞նչպես վարվել այժմ, ի՞նչպես վարվել այսուհետև : Իրոք դեռ ինչպիսի՞ «չլուծված» ներքին գործեր ունի գերմանական Փաշիզմը : Հո չպիտի դրադվեն արդեն այրված ռայխստագի նոր հրկիզումով (ծիծաղ, ծափահարութեան) :

Թե ինչ արժեն նրանց մի քանի դաշնակիցներն արտաքին և մասնավորապես հակախորհրդային Կալանտյուրաներ պատրաստելու գործում, — մենք նույնպես զիտենք :

Ինչպես յերևում է, Ճապոնիայում քիչ չեն այնպիսի մարդիկ, վորոնք վորոշում են իրենց ազատ համարել ներքին մեծ հոգսերից, քանի վոր ուղում են ճապոնական ուժերը դարձնել գերմանական Փաշիզմի դաշնակից՝ դադութների և աժեն տեսակ հափշտա-

կումների ավանտյուրիստական պլաններն իրականացնելու ասպարեզում :

Յեվ իսկապես, կարծես քիչ ժամանակ չի անցել 1936 թվականի փետրվար ամսի հայտնի դեպքերից հետո : Չե՞ վոր այն ժամանակ Տոկիոյում Փաշիստորեն գործող դադադած սպաների մի փոքրիկ խմբակ, ընդամենը մի փոքր ժամանակով, այսպես ասած՝ «մի կողմ հրեց» կենտրոնական իշխանութեանը պետութեան մայրաքաղաքում : Չե՞ վոր մի քանի որով կորած մի-նիստրներն այսպես կամ այնպես արդեն գտնվեցին... (ծիծաղ, ծափահարութեան) :

Վերջիվերջո մեր գործը չե դատողութեաններ անել Ճապոնիայի ներքին կարգերի և ճապոնական իշխանութեաններին ներքին հոգսերի մասին :

Մակայն վերադառնալով գերման-ճապոնական համաձայնութեանը, վորն արտաքին աշխարհի համար ունի «կոմունիզմի» դեմ ուղղված համաձայնութեան կերպարանք, բայց իրոք նման է իմպերիալիստների հափշտակողական նպատակներով կնքված սովորական դաշինքի, — մենք պետք է ուղղակի ասենք, վոր մեր աչքը չենք փակում այդ համաձայնութեան իրական ընույթի հանդեպ : Մեզ համար հատկապես յե խաղաղութեան գործի համար յեղած այն անհանգստութեանը, վորն առաջ է բերել այդ «համաձայնութեանը» բոլոր յերկիրներում :

Չե՞ վոր պատահականութեան չե այն փաստը, վոր այստեղ խոսքը վերաբերում է յերկու պետութեաններին, վորոնք նախապես, մեկը մյուսի հետևից, դուրս յեկան Մոզգերի Լիգայից : Յեվ, ինչպես արդեն այն ժամանակ հասկանալի յեր բոլորին, դուրս յեկան նրա

համար, վոր կատարելապես իրենց ձեռքերն ազատ արձակեն հախչտակողական ուղղմական ավանտյուրաների համար :

Յեթե այժմ խոսքն իրոք վերաբերեր «կոմունիստական վտանդի» դեմ բուրժուական պետութիւններին մըդած սոցիալական պայքարին, ապա Գերմանիան և Ճապոնիան կարիք չեն ունենա վաղորդ դուրս դալ Ազգերի Լիգայից : Բոլորին հասկանալի չե, վոր Ազգերի Լիգան խոչընդոտ չի հանդիսանում այդ տեսակետից :

Պատահական չեն լինում նաև այսպիսի փաստերը : Բոլորն ել գիտեն, թե այն հայտնի պակտը, վորը նպատակ ունի ապահովել խաղաղութիւնն Արևելյան Յեվրոպայում, Փաշխտական Գերմանիան վճռականութիւն չունեցալ ստորագրելու և աշխատում ե վիժեցնել այն : Չի կարելի մոռանալ նաև այն, վոր ճապոնական կառավարութիւնն ահա արդեն մի քանի տարի չե, վոր խուճափում ե Հարձակվելու պակտ վնքելու մեր առաջարկից :

Այդ պատճառով ել շատերն այնքան շուտ ըմբռնեցին վերջին գերման-ճապոնական համաձայնութիւն խոստովան իմաստը, մի համաձայնութիւն, վորի հեղինակները պատրաստակամութիւն ցուցաբերեցին պաշտպելու վոչ միայն իրենց գործերով, այլև մյուս յերկիրների գործերով :

Հետաքրքիր ե, վոր ամբողջ աշխարհում վոչ վոք չի հավատում այդ համաձայնութիւն հեղինակների խոսքերին և այն բանին, ինչ վոր դրել են նրանք հրապարակելու համար :

Նույնիսկ բուրժուական մամուլն ամենուրեք դրում ե, վոր այստեղ խոսքը «կոմունիզմի» դեմ պայքարե-

լուն չի վերաբերում, այլ՝ Չինաստանի և Յեվրոպայի, ներառյալ նաև ԽՍՀՄ-ի նկատմամբ յեղած գիշատիչ պլաններին : Հետևաբար «կոմունիզմի դեմ պայքարելու» պատրվակով իմպերիալիստների զավաղութիւնն ե կազմվում խաղաղութիւն դեմ, կազմվում ե պատերազմի հրձիղների զավաղութիւնն :

Վորոչ մտքով՝ խաղաղութիւն գործի դեմ ուղղված դավաղութիւնն ել կարելի չե անփանել «պայքար կոմունիզմի դեմ» : Բայց այն ժամանակ պետք ե հետևողական լինել և ասել այն, ինչ վոր դոյութիւնն ունի իրականութիւն մեջ. ներկա պայմաններում՝ Փաշիզմն իր դաշնակիցներով պատերազմի ծրագիր ե, իսկ կոմունիզմը և ԽՍՀՄ-ն՝ խաղաղութիւն ծրագիր են (ծափահարութիւններ) :

Մենք շատ փաստերից դիտենք, վոր խաղաղութիւնը վիժեցնել և պատերազմ բռնկեցնել սիրողները քիչ չեն այժմ : Մենք շարունակ համապատասխան հիշեցումներ ենք ստանում մեր սահմաններից : Հարևան պետութիւններին մի քանի գիւնդրակիւններ, չկարողանալով քիչ թե շատ իրենց լուրջ պահել, իրենց պահում են բաւարի վորպես աշխան աներես ճանճեր (ծիծաղ, ծափահարութիւններ) :

Մի քանիսի մոտ այդ տեղիք ե տալիս նաև այսպիսի դատողութիւններին, թե՛ դուցե Փաշիստները և նրանց դաշնակիցները չեն կարող այլևս հույս դնել իրենց ներքին դրութիւնն ամբողջութիւն վրա, այդ պատճառով ել շտապեցնում են պատերազմը : Հասկանալի չե, այդ նրանք ավելի լավ կլինան : Հո մենք չե՞ վոր պետք ե խղճանք Փաշիստներին և իմպերիալիստական մյուս ամբանտյուրիստներին :

Մեր խնդիրն ե՛լ խաղաղության պահպան կանգնել և պատրաստ լինել դրսից յեկող ամեն մի դավադրութեան ու վտանգութեան (ծափահարութեան) :

Մենք ամբողջովին զբաղված ենք մեր ներքին դուրձերով : Մենք անշեղորեն վարում ենք մյուս պետութեաններին ներքին գործերին չմիջամտելու քաղաքականութեան : Մենք պարծենում ենք, վոր մեր յերկրում հաստատված է ազգամիջյան խաղաղութեան և ժողովուրդների բարեկամութեան, և կուզեյինք միայն այն, վոր բոլոր ժողովուրդների հարաբերութեաններում ապահովված լիներ հաստատուն խաղաղութեանը (ծափահարութեան) :

Յեթե պարոնայք Ֆաշիստները և կիսաֆաշիստները դուրս են գալիս Ազգերի Լիգայից, վորովհետև նա չի խրախուսում ռազմական ավանտյուրաները, ապա մենք, ընդհակառակը, կողմնակից ենք, վոր Ազգերի Լիգան ավելի հաջողութեամբ, քան մինչև այժմ, պաշտպանի ժողովուրդների խաղաղութեան գործը և ավելի ակտիվորեն հականերգործի պատերազմի բոլոր ու ամեն տեսակ հրձիղներին :

Բայց յեթե անկեղծ խոսելու լինենք, ապա խաղաղութեան շահերի և ԽՍՀՄ-ի ժողովուրդների խաղաղ աշխատանքի պաշտպանութեան գործում մենք իսկապես հավատում ենք միմիայն մեր սեփական ուժերին (ծափահարութեան) :

Յեվ մենք զիտենք, վոր այդ ուժերն աճում են այնքան ավելի արագ, վորքան ավելի յե ամրանում ԽՍՀՄ-ի ժողովուրդների մեծ բարեկամութեանը, վորքան ավելի միահամուռ կերպով և զիտակցաբար կաշխատենք մենք բոլորս ԽՍՀՄ-ի մեր նոր, ստալինյան Սահմանադրութեան հիման վրա (ծափահարութեան) :

Մեր Սահմանադրութեանն որենադրական ձևակերպում կտա սոցիալիստական հասարակութեանը : Նա մեր համարյա քսանամյա նվաճումների արդյունքն է : Նա միևնույն ժամանակ մեր ամբողջ գործի հզոր առաջադիմիչն է :

Մենք իրականացրինք կոմունիզմի միայն առաջին, ստորին փուլը : Կոմունիզմի նույնիսկ այդ առաջին փուլը՝ սոցիալիզմը, դեռ հեռու չէ ավարտված : Ընկերաց, կառուցված է միայն հիմնականում :

Մեր յերկրում վերացվեցին մակաբույծ դասակարգերը, այսինքն բոլոր և ամեն տեսակ կապիտալիստներն ու կապիտալիստիկները : Դրա շնորհիվ վոչնչացված է մարդու չահագործումը մարդու կողմից : Դա մի հակայական քայլ է դեպի առաջ, վոչ միայն մեր յերկրի ժողովուրդների կյանքում, այլև ամբողջ մարդկության արդարադրման ճանապարհին :

Սակայն մենք լրիվ չենք լուծել դասակարգերի վերացման խնդիրները, թեպետ իշխանութեան գլուխը կանգնած ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգն արդեն պրոլետարիատ չէ բառիս բուն իմաստով, իսկ իր մասսայով կոլեկտիվիստներն են մտած գյուղացիութեանն արդեն բնավ հին գյուղացիութեանը չէ :

ԽՍՀՄ-ում գոյութեամբ ունեցող յերկու դասակարգերից թե մեկը և թե մյուսը սոցիալիզմ են կառու-

ցում, մտնում են սոցիալիստական սնտեսուլթյան սխտեմի մեջ: Սակայն գտնվելով սոցիալիստական սնտեսուլթյան մի ընդհանուր սխտեմում, բանվոր դասակարգն իր աշխատանքով կապված է պետական սոցիալիստական սեփականության հետ (համաժողովրդական ստացվածքն է հետ), իսկ կոլտնտեսային դյուղացիությունը՝ կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության հետ, վորը պատկանում է առանձին կոլտնտեսություններին և կոլտնտեսային-կոոպերատիվ միավորումներին: Սոցիալիստական սեփականության տարբեր ձևերի հետ դյուլթյուն ունեցող այդ կապով է վորոչվում նախ և առաջ այդ դասակարգերի դրուլթյան տարբերությունը: Դրանով էլ վորոչվում է նրանց հետագա դարդացման ուղիների վորոչ տարբերությունը:

Նրանց զարդացման մեջ ընդհանուրն այն է, վոր այդ յերկու դասակարգերն էլ զարդանում են դեպի կոմունիզմը (ծափահարություններ): Այդ կապակցությամբ աստիճանաբար ջնջվելու յեն տարբերությունները նրանց դասակարդային դրուլթան միջև, մինչև վոր այստեղ ևս վերջնականապես անհետանան դասակարդային տարբերությունների մնացորդները:

Ձի կարելի չտեսնել, վոր դա տեական ճանապարհ է: Ձի կարելի նաև չտեսնել, վոր այդ ինդիւրների լուծումը կախված էլինի այն բանից, թե մեզ մոտ վորքան հաջողությամբ կիրականացվի,—ինչպես արտահայտվեց ընկեր Ստալինը,—«հասարակության պետական ղեկավարումը (դիկտատուրան)», վորը «պատկանում է բանվոր դասակարդին, վորպես հասարակության առաջավոր դասակարդի»:

Այդ կապակցությամբ պետք է խոսել նոր Սահմանա-

դրության այն կետի վերաբերյալ, վորտեղ խոսվում է ԽՍՀՄ-ում կոմունիստական կուսակցության ունեցած ղեկավար դերի մասին: Սահմանադրությունն այստեղ ևս ասում է միայն այն, ինչ վոր մեզ մոտ դյուլթյուն ունի իրականում և ինչ վոր ճանաչել են մեր յերկրի աշխատավոր մասսաները:

Միմիայն կոմունիստական կուսակցության ղեկավարությունն ապահովեց պրոլետարական հեղափոխության հաղթանակը և բանվորների ու դյուղացիների սոցիալիստական պետության կառուցումը: Նոր Սահմանադրությամբ, վորն ուղղակի մասնացույց է անում կոմունիստական կուսակցության ղեկավար նշանակությունը ԽՍՀՄ-ի պետական և հասարակական կազմակերպություններում, աշխատավորներն արտահայտում են իրենց համերաշխությունը մեր կուսակցության բոլլեիկյան քաղաքականության և լիակատար կոմունիզմ իրականացնելու նրա նպատակների հետ, կոմունիզմ բառիս բուն իմաստով (ծափահարություններ):

Մեր կուսակցությունը, Լենինի-Ստալինի կուսակցությունը, վայելում է աշխատավորների անսահման վստահությունը: Նա, իհարկե, լիովին վստահել է ԽՍՀՄ-ի բանվորների, դյուղացիների ու աշխատավոր ինտելիգենցիայի այդ վստահությունն ու սերը: Նրա հեղինակությունը բարձր է նաև Խորհրդային Միության սահմաններից դուրս:

Այդ չի նշանակում, վոր նա թշնամիներ չունի:

Նա ունի նույն թշնամիները, ինչ վոր ունեն բանվոր դասակարգը, կոլտնտեսային դյուղացիությունը, աշխատավոր խորհրդային ինտելիգենցիան: Այլ խոս-

քով՝ մեր կուսակցութեան թշնամիներն են հանդիսանում սոցիալիզմի թշնամիները, բանվորները և գյուղացիները սոցիալիստական պետութեան թշնամիները: Լենինի-Ստալինի կուսակցութեան թշնամիներն են հանդիսանում այժմ նրանք, ովքեր ուզում են վերականգնել կապիտալիզմն ու վերադարձնել բուրժուազիայի իշխանութիւնը և այդ պատճառով ամբողջ հոգով ատում են ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրութիւնը, վորը մարդկանց ցույց ե տալիս յերջանիկ կյանքի՝ կոմունիզմի ճանապարհը:

Կոմունիզմի թշնամիների այդ դայելի վոհմակում այժմ վերջին տեղը չեն գրավում պարոն տրոցկիստները, վորոնք բուրժուազիայի հետ մի ընդհանուր նպատակ ունեն: Ինչպես հայտնի յե՛ այդ մարդիկ ի հաճույս բուրժուական պետութիւնների և նրանց ցուցումներով, դիմեցին ամենակեղտոտ և ամենատարբեր հակահեղափոխական դործերի:

Մեզ համար հասկանալի յե Կամեն բանի պատրաստ այդ բուրժուական այլասերվածների կատաղութիւնն ու անսկզբունքայնութիւնը, մարդիկ, վորոնք մեր կուսակցութեանը և սոցիալիզմի բոլոր ազնիվ կառուցողներին ատում են ռենեգատներին վայել կատաղութեամբ: Հայտնի յե, վոր նրանք ձայնակիցներ ու գործակիցներ ունեն նաև աջ թափթիովները մեջ:

Ի՞նչ կա վոր: Մենք դիտենք, թե ինչպես պետք ե վարվել հեղափոխութեան թափթիովների հետ:

Ակնհայտ ե, վոր պետք ե ուժեղացնել պայքարը մեր պետական ապարատի մի քանի դեկալարների անհոգութեան և դիվողականութեան դեմ: Պետք ե բարձրացնել հեղափոխական ղեաստութիւնն աշխատավոր-

ների շարքերում: Հարկավոր ե վոչ թե խոսքով, այլ գործով հիշել դասակարգային թշնամու մասին և բարձրացնել մասսաների կոմունիստական դիտակցութեանը: Մաքրել ճանապարհը թշնամիներից՝ նշանակում ե ազատ արձակել մասսաների ուժերը կոմունիզմի լիակատար հաղթանակի համար մղվող պայքարում (ծափահարութիւններ):

Ինչ ել ձեռնարկեն մեր դասակարգային թշնամիներն այստեղ և Խորհրդային Միութեան սահմաններից դուրս, մեր ուժերն արագորեն աճում են:

Բարձրանում են իրենց դործի տեխնիկային տիրապետած, իրենց ամբողջ արտադրութեանը, իսկական նոր կուլտուրային տիրապետած միլիոնավոր մարդիկ: Վոչ դադանի լրտեսների ու յերկերեսանիների ավերիչ աշխատանքով, վոչ ել ծանր հրանոթների արկերով չես ջարդի և չես կազմալուծի այդ բազմամիլիոն շարքերը (բուռն ծափահարութիւններ):

Անախընթաց արագութեամբ բարձրանում են աշխատանքի նոր հերոսներ—սոցիալիստական շինարարութեան՝ բարձր տեխնիկայով զինված հարվածայինները, մեր պանծալի ստախանովականները (ծափահարութիւններ):

Մեր ամբողջ յերկրին հայտնի յեն դառնում բանվորների ու բանվորուհիների, կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների, կուլտուրայի, տեխնիկայի, գիտութեան ու արվեստի մարդկանց նորանոր անուններ, և ամեն մի այդպիսի անուն աղղանչան ե ծառայում նորանոր անունների հրապարակ գալուն:

Հանձնն ողի, ծովի և Արկտիկայի հերոսների, տարերքի դեմ մղվող պայքարի հերոսների, վորոնց

չարքերն աճում են մեր աչքի առջև, մենք տեսնում ենք ԽՍՀՄ-ի ամեն մի թշնամու դեմ մղվող պայքարի հերոսների նախապատկերը (բուռն ծափահարություններ) :

Մենք պետք է ինչպես հարկն է զինվե՞նք այն ամենով, ինչ վոր հարկավոր է, վորպեսզի թշնամին դիտենա, վոր մեզ հետ հանաք անել չի կարելի :

Այժմ մեր սպառազինության պանծալի զինանոցը կմտնի նաև սոցիալիզմի «ստալինյան Սահմանադրութիւնը» (ծափահարություններ) :

Մարքսիզմ-լենինիզմի դրոշի տակ, Լենինի-Ստալինի կուսակցութեան դրոշի տակ, ստալինյան Սահմանադրութեան դրոշի տակ՝ առաջ դեպի կոմունիզմ (բուռն ծափահարություններ, աղմկալի ովացիաներ, «ուռա»-ներ, վոդջույնի բացականչություններ ընկեր Մոլոտովի հասցեյին, բացականչություններ՝ «կեց-ցե՛ ստալինյան Սահմանադրությունը», «ուռա») :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Սոցիալիզմը սահմանադրութեան հիմքն է	5
II. Մեր վերաբերմունքը դեպի դեմոկրատիզմը	12
III. ԽՍՀՄ և խաղաղութիւնը ժողովուրդների միջև	30
IV. Առաջ դեպի կոմունիզմ	45

Քարգմ. Արշ. Խոնդկարյան, խմբ. ~~Արշ. Խոնդկարյան~~
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան
Սրբ. վ. Ջիդեշյան, տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

գլավիլիտի լիազոր № 1109—A, Կրատ. № 412,

պատվեր № 341, տիրաժ 15,000, ինդեքս ^{Պ-84} PK

Հանձնված է արտադրության 20/XII 1936 թ.

Ստորագրված է տպագրության 31/XII 1936 թ.

Գինձ | 50 կ.

Հայկուսհրատի տպարան, Յերևան

Ալլանկերդյան № 71

30

ՀՀ Ազգային գրադարան



NL0977278

47

ԳԻՆԸ 50 Կ.

1
3343



Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ
ԿՈՆՏԻՏՈՒՄԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Արմպարտիզատ, Երևան, 1937